ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի դեկտեմբերի 7-ից 13-ը Նիդերլանդների Թագավորություն գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ՝**

Ժենյա Տեր-Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ՝**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության բաժնի պետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ՝**

2025 թվականի դեկտեմբերի 7-ից 13-ը Նիդերլանդների Թագավորություն (Ամստերդամ/Շիպհոլ-Ռեյկ)

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ՝**

JAA TO ուսումնական կենտրոն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝**

«International Air Law» դասընթացին մասնակցություն, հավաստագրի ստացում, ինչպես նաև JAA TO-ի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջև փոխըմբռնման հուշագրի ստորագրում:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Ավիացիոն գիտելիքների ու հմտությունների ձևավորում և զարգացում միջազգային օդային իրավունքի հասկացությունների ու կանոնների և ընթացակարգերի, ինչպես նաև կազմակերպությունում վերջիններիս ներդրման կարևորության համապատասխան գործառույթների իրականացման վերաբերյալ:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ.

Դասընթացի ընթացքում մասնակցել եմ դասախոսությունների, խմբային քննարկումների դասախոսական կազմի և դասընթացի մասնակից ավիացիոն ոլորտի մասնագետների հետ: Հանդես եմ եկել JAA TO ուսումնական կենտրոնի և ՀՀ

տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջև փոխըմբռնման հուշագրի ստորագրման հետ կապված ողջույնի խոսքով և ներկայացրել հետագա համագործակցության տեսլականը:

8. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.

Հայաստանի Հանրապետության կառավարության 10.07.2025թ. N 933-Ն որոշման դրույթների և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի օգոստոսի 15-ի «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ձեռնարկը հաստատելու մասին» N 43-Լ հրամանով հաստատված «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ձեռնարկի» կիրառում:

/Ժենյա Տեր-Վարդանյան
15.12.2025թ.